



ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

Հաշիվը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ում Ձեզ թույլ է տալիս ընտրել վճարման, ներդրման և ֆինանսավորման պահանջները բավարարող լուծումներ, ինչպես նաև ձեռք բերել ֆինանսների աշխարհում վստահելի գործընկեր:

Ուժի մեջ է 15.12.2025թ.-ից

No.	Ծառայություն	Սակագին
1.	Հաշվի բացում	
	Ընթացիկ հաշվի բացում	AMD 500,000
	Ընթացիկ հաշվի բացման հայտի դիտարկում	250,000 ՀՀ դրամ ¹
	Կառուցապատողի հատուկ հաշվի բացում	AMD 50,000
	Ընթացիկ հաշվի բացման սակագինը գանձվում է առաջին հաշվի բացման համար, երկրորդ և հաջորդող հաշիվները բացվում են անվճար: Յուրաքանչյուր հաճախորդի համար ՀՀ դրամով հաշվի բացումը պարտադիր է:	
	էսքրոու հաշվի բացում և սպասարկում, պայմանագրի պայմանների փոփոխություն	գործարքի գումարի 0.20%, նվազագույնը՝ AMD 50,000, առավելագույնը՝ AMD 300,000, յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագրի համար՝ AMD 25,000
	Ավանդային հաշվի բացում	անվճար
	Դեպո հաշվի բացում	
	Պետական պարտավորումների հաշվառման դեպո հաշիվ	անվճար
	Այլ դեպո հաշիվների բացում	պայմանագրային
2.	Հաճախորդի վերաակտիվացում *	AMD 5,000
	* 6 ամսվա ընթացքում հաճախորդի բոլոր հաշիվներով գրոյական շարժի դեպքում հաճախորդը ապակտիվացվում է և նրանից չի գանձվում հաճախորդի ամսական սպասարկման սակագինը:	
3.	Հաշով գործարքներ չիրականացրած հաճախորդների սպասարկում	366-730 օր – AMD 30,000.00 (երեսուն հազար) ամսական,

¹ Հետագայում հաշվի բացման դրական և վերջնական որոշման դեպքում նվազեցվում է հաշվի բացման համար նախատեսված միջնորդավճարի գումարից: Հաշվի բացման մերժման դեպքում, երբ մերժումը տեղի է ունեցել հաճախորդի կողմից սկզբնական հայտարարված նպատակից և գործարքների բնույթից շեղվելու արդյունքում, ինչպես նաև հաճախորդի կողմից հաշվի բացումից հրաժարվելու կամ սահմանված ժամկետներում անհրաժեշտ բնօրինակ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում միջնորդավճարը ենթակա է վերադարձման:

		731 օր և ավել – AMD 100,000.00 (հարյուր հազար) ամսական:
Հաճախորդի բոլոր հաշիվներով 12 ամիս անընդմեջ գործարք չիրականացնելու դեպքում հաշիվը դառնում է չաշխատող հաշիվ: Նշված միջնորդավճարը գանձելու համար Հաճախորդի հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում, Բանկը գանձում է միջնորդավճար հաշիվների առկա մնացորդի չափով և փակում է հաճախորդի հաշիվները:		
4.	Տոկոսների հաշվարկում ընթացիկ հաշվի մնացորդի վրա	
	▪ ՀՀ դրամով	պայմանագրային
	▪ Արտարժույթով	պայմանագրային
5.	Հաշվի սպասարկում	
	▪ ՀՀ դրամով	անվճար
	▪ Արտարժույթային	անվճար
6.	Հաճախորդի սպասարկում	AMD 15,000 ամսական
	Կառուցապատողի հատուկ հաշվի սպասարկում	AMD 5,000 ամսական
7.	Հաշվի քաղվածքի տրամադրում	
	Առձեռն բանկում	
	▪ Յուրաքանչյուր գործարքի ավարտից հետո	անվճար
	▪ Ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
	▪ Ամբողջական անգլերեն լեզվով թարգմանված	AMD 5,000 յուրաքանչյուր ամսվա համար
	Պատվիրված նամակով	փոստային ծախսեր
	Ֆաքսով (ՀՀ տարածքում)	AMD 1,500
	Ֆաքսով (ՀՀ տարածքից դուրս)	AMD 3,000 յուրաքանչյուր էջի համար
	Բանկ-Հաճախորդ համակարգով	անվճար
	Էլեկտրոնային փոստով	անվճար
8.	Հաշվից քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	անվճար
9.	Լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկանքների տրամադրում հաշվի և հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ, լիազորագրերի պատրաստում	
	Ստանդարտ բնույթի տեղեկանքների տրամադրում ²	AMD 3,000.00
	Ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքների տրամադրում ³	AMD 5,000.00
	Ոչ հաշվետեր հաճախորդներին գրությունների և տեղեկանքների տրամադրում	AMD 4,000.00

² Բանկի ստանդարտ բնույթի տեղեկանքներ են համարվում բանկային հաշիվների առկայության, մնացորդի, հաշիվներ չունենալու, ավանդային հաշիվների, վարկային պարտավորությունների, պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանքները:

³ Բանկի ոչ ստանդարտ բնույթի տեղեկանքներ համարվում են բոլոր այլ ձևաչափերի փաստաթղթերը:

Ոչ հաշվետեր հաճախորդներին գրությունների և տեղեկանքների տրամադրում նույն օրվա ընթացքում		AMD 6,000.00
Պատվիրված նամակով		+ + փոստային ծախսեր
Ֆաքսով (ՀՀ տարածքում)		+ AMD 2,000 յուրաքանչյուր էջի համար
Ֆաքսով (ՀՀ տարածքից դուրս)		+ AMD 3,000 յուրաքանչյուր էջի համար
Տեղեկանքների տրամադրում աուդիտորական հարցումների վերաբերյալ յուրաքանչյուր հարցման համար		AMD 10,000
Լիազորագրի պատրաստում		AMD 4,000
6-րդ, 7-րդ և 8-րդ կետերի սակագներում ԱԱՀ-ն ներառված է		
10.	Հաշվի փակում	անվճար
11	Ինտերներ-Բանկ համակարգ	
	Գաղտնագրությամբ կոդեր ձևավորող հատուկ սարք	AMD 9,000 (միանվագ յուրաքանչյուր օգտագործողի համար)
	Գաղտնագրությամբ կոդեր ձևավորող մոբայլ սարք (ծրագիր)	անվճար
	Ամսական սպասարկման վճար	AMD 15,000
	Հաշիվների քաղվածքներ և գործարքներ դիտելու հնարավորություն առանց սարքի տրամադրման	անվճար
	Սարքի կորստի դեպքում լրացուցիչ սարքի տրամադրում	AMD 10,000
11.	Գործառնություններ կանխիկ դրամով	
	Չեկային գրքույկի տրամադրում	AMD 5,000
	Հայտ-լիազորագրի հիման վրա, որը չի ներառում միջնորդավճարները	AMD 500
11.1.	Գործառնություններ կանխիկ դրամով	Գործառնություններ կանխիկ դրամով
	Ընթացիկ հաշվից կանխիկ գումարի ելքագրում	
	▪ ՀՀ դրամով	0.50%
	▪ էսքրոու հաշվին կանխիկ մուտքագրված դրամական միջոցների չափով՝ անկախ շահառուին այդ միջոցների վճարման եղանակից (կանխիկ կամ անկանխիկ)	անվճար
	▪ ԱՄՆ դոլարով	0.5%
	▪ Եվրոյով	0.5%
	▪ ՌԴ ռուբլով, Շվեյցարական ֆրանկով	անվճար
	Ընթացիկ հաշվին կանխիկ գումարի մուտքագրում	
	▪ ՀՀ դրամով	անվճար
	▪ ԱՄՆ դոլարով, Եվրոյով	անվճար
	▪ ՌԴ ռուբլով,	1.00%

▪ <i>Բրիտանական ֆունտ ստեռլինգով</i>		<i>3.00%</i>
<i>Հնամաշ թղթադրամի փոխանակում</i>		
▪ <i>ԱՄՆ դոլար, Եվրո, Ռուսական ռուբլի</i>		<i>4.00%</i>
▪ <i>Այլ արտարժույթ</i>		<i>պայմանագրային</i>
12.	ՀՀ պետական պարտավորումների աճուրդներին մասնակցության սակագին	
Պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով (միջնորդավճարի չափը հաշվարկվում է միայն աճուրդին ներկայացված հայտի բավարարված անվանական արժեքով ծավալի նկատմամբ)		<i>0.015%, նվազագույնը՝ AMD 5,000 + Օպերատորի կողմից գանձվող միջնորդավճար</i>
13. Ռեպո համաձայնագրերի վաղաժամ մարում և նոր համաձայնագրի կնքում՝ արժեկտրոնների ստացման, արժեթղթի, տոկոսադրույքի փոփոխության, գումարի նվազեցման կամ ավելացման և այլ նպատակով		<i>AMD 5,000</i>

Պայմաններ

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (հետագայում՝ Բանկ) իրավունք ունի փոփոխել սույն Սակագները և Պայմանները (հետագայում՝ Սակագներ)՝ այդ մասին պատշաճ կերպով ծանուցելով Հաճախորդին:
2. Սույն Սակագները սահմանված են Բանկի կողմից մատուցվող ստանդարտ ծառայությունների համար: Բանկն իրավունք ունի իր կողմից մատուցված ոչ ստանդարտ ծառայությունների դիմաց գանձել լրացուցիչ կամ Սակագներում չնշված այլ հատուցում, ինչպես նաև գանձել այդ ծառայությունների մատուցման համար փաստացի իրականացված հեռահաղորդակցման ծախսերը:
3. Բանկը ոչ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ մասնակցությամբ հաճախորդների համար, ելնելով վերջիններիս բիզնեսի առանձնահատկությունից, բանկի ռազմավարությունից, հաճախորդի շարժերից և գործարքների ծավալից, կարող է սահմանել անհատական սակագներ:
4. Բանկի կողմից կիրառվող Սակագները հաշվարկվում են ելնելով գործառնության գումարից և գանձվում են Բանկում վարվող Հաճախորդի բանկային հաշվից (հաշիվներից)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը հանձնարարական է տալիս գանձումները կատարել գործարքի գումարից:
5. Բանկի կողմից սահմանված Սակագները գանձվում են Հաճախորդի դրամային հաշվից: Հաճախորդի դրամային հաշվին Սակագների գանձման համար անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ դրանք գանձվում են հաշվին մուտքագրված գումարից:
6. Արտարժույթով սակագները գանձվում են ՀՀ դրամով, հաշվարկված գանձման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքով: Թղթակից կամ այլ արտասահմանյան բանկերի սակագները Բանկն իրավունք ունի գանձել Բանկում վարվող Հաճախորդի այլ հաշիվներից:
7. Բոլոր ընթացիկ հաշիվները գործում են բազմարժույթային ռեժիմով: Եթե Հաճախորդն իրականացնում է գործառնություններ արժույթով, որը տարբերվում է Բանկում վարվող հաշիվների արժույթներից, և որոնք կրում են պարբերական և/կամ հաճախակի բնույթ, ապա Հաճախորդը բացում է ընթացիկ հաշիվ այդ արժույթով:

8.Բանկի կողմից գանձված Սակագները վերադարձման ենթակա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս գանձվել են սխալմամբ:

9.Փոխարկային և արժեթղթերով գործառնություններն իրականացվում են Բանկի տվյալ օրվա գնանշումներով՝ համաձայն Հաճախորդի հետ կնքված համապատասխան պայմանագրի:

10.Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար, ինչպես նաև ֆինանսավարկային կազմակերպությունների համար Բանկը կարող է սահմանել առանձին Սակագներ և Պայմաններ, որոնք ամրագրվում են Հաճախորդի հետ կնքվող հաշվի սպասարկման պայմանագրում:

11.Էսքրոու հաշվից գումարի կանխիկացման և/կամ փոխանցման կամ այլ գործառնությունների դեպքում կիրառվում են Հաշվի սպասարկման և/կամ փոխանցումների համար նախատեսված Բանկի համապատասխան սակագները:

12. Գրությունների և տեղեկանքների համար նախատեսված վճարը չկատարելու դեպքում Բանկը դրանց չի պատասխանում: